«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Հայ-ռուսական համալսարանի գիտական գծով

պրոռեկտոր, փ.գ.դ., պրոֆեսոր

Պ.Ս. Ավետիսյան

_____ «10» դեկտեմբերի 2021թ.

ԿԱՐԾԻՔ

Հայ-ռուսական համալսարանի

(առաջատար կազմակերպության)

Ռուբինա Վարդանի Պետրոսյանի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների իրականացումը ՀՀ-ում» վերտառությամբ

ԺԲ.00.03 - Մասնավոր իրավունք – (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ռուբինա Վարդանի Պետրոսյանի կողմից պաշտպանության ներկայացված ատենախոսությունը նվիրված է իրավագիտության մեջ բավականին հետաքրքիր և կարևոր նշանակություն ունեցող թեմայի՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների իրականացման հարցերին:

Ակնհայտ է, որ ներկայումս զգալիորեն փոխվել է երեխայի իրավական կարգավիճակը, ինչպես նաև երեխայի և նրա խնամքի ու դաստիարակության համար պատասխանատու անձանց միջև միջև իրավահարաբերությունների բնույթն ու բովանդակությունը, և այդ փոփոխություններն իրենց արտացոլումն են գտել ինչպես ՀՀ Սահմանադրության, այնպես էլ ՀՀ ընտանեկան օրենսգրքի մեջ: ՀՀ գործող ընտանեկան օրենսգիրքը նախատեսում է այդ հարաբերությունների կարգավորման

մեխանիզմներ, որոնք տարբերվում են նախկին օրենսդրական կարգավորումներից: Նշված փոփոխությունները պատասխանատու անձանց և երեխաների իրավահարաբերությունների կարգավորման հետ կապված մի շարք հարցերում բավականին արդյունավետ լուծումներ են առաջարկում, սակայն միաժամանակ զերծ չեն թերություններից, բացթողումներից և հակասություններից:

Ողջունելի է ատենախոսի կողմից նման թեմայի ուսումնասիրությանը ձեռնամուխ լինելը, քանի որ ՀՀ իրավունքի գիտության մեջ առաջին անգամ ատենախոսության մակարդակով իրականացվել է առանց խնամքի մնացած երեխաների անձնական ոչ գույքային և գույքային հարաբերությունների իրավական կարգավորման հետ կապված խնդիրների մանրամասն հետազոտություն և դրանց լուծման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում:

Ատենախոսն իր առջև նպատակ է դրել համակարգված և հիմնավոր վերլուծության ենթարկել առանց խնամքի մնացած երեխաների անձնական ոչ գույքային և գույքային իրավահարաբերությունների ոլորտում առաջացող տեսական և պրակտիկ հարցերը, այդ իրավահարաբերությունների պատմական զարգացման միտումներն ու օրինաչափությունները, դրանց կարգավորմանն ուղղված նոր դրույթների ներդրման նպատակահարմարությունը: Ուսումնասիրության արդյունքում ատենախոսը կարողացել է հասնել իր առջև դրված վերոհիշյալ նպատակներին:

Ատենախոսության ակնառու արժանիքներն են.

1. ատենախոսությունն ունի բավականին հարուստ տեսական հիմք: Ատենախոսն իր աշխատանքում հետազոտել է ինչպես հայրենական, այնպես էլ օտարերկրյա հեղինակների գիտական աշխատություններ և հոդվածներ, ինչպես նաև պրակտիկ նյութեր,
2. ուսումնասիրություններ կատարելիս հեղինակն անդրադարձել է նաև ընտանեկան իրավունքի որոշ ինստիտուտների և մի շարք տեսական հարցերի քննությանը,
3. քննարկվող հարցերը վերլուծելիս ատենախոսն անդրադարձել է նաև առանց խնամքի մնացած երեխաների անձնական ոչ գույքային և գույքային հարաբերությունների սոցիալական և տնտեսական ասպեկտներին:

Ուշագրավ են հեղինակի կողմից արված մի շարք դիտողություններ և առաջարկություններ, որոնք վերաբերում են ՀՀ ընտանեկան օրենսդրության կատարելագործմանը: Պետք է նշել դրանցից մի քանիսը:

Այսպես, տեղին է հեղինակի կողմից կատարված այն դիտողությունը, որ Ընտանեկան օրենսգրքում բացակայում է «առանց ծնողական խնամքի մնացած երեխա» հասկացության սահմանումը:

Համակարծիք ենք հեղինակի այն դիրքորոշման հետ, որ ծնողական խնամքից զրկվելու պատճառները կարող են շատ տարբեր լինել և ծնողական խնամքից զրկվելու հիմքերի սպառիչ ցանկ Օրենքում ամրագրելը հիմնավոր չէ:

Ուշադրության արժանի է հեղինակի կողմից «երեխայի լավագույն շահ» հասկացությանը վերաբերող վերլուծությունները և այն եզրահանգումը, որ խնամատարության հանձնումը մերձավոր ազգականին պետք է հնարավոր դառնա միայն իրավասու մարմինների կողմից կատարվող հետազոտությունների և «երեխայի լավագույն շահերին» համապատասխանության գնահատման արդյունքում:

Ատենախոսը տեղին է նկատում, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդրի կողմից կատարվել է ոչ ճիշտ ձևակերպում՝ գույքի օտարման գործարքների ցանկում նշելով նաև գույքի վարձակալության պայմանագիրը: Միաժամանակ, նշված հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է խնամարկյալի գույքի նվազեցմանը հանգեցնող գործարքի կնքման անթույլատրելիություն, սակայն հոդվածը գույքային դրության փաստացի վատթարացման արգելք չի նախատեսում:

Ուստի հեղինակի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասը նոր խմբագրությամբ շարադրելու վերաբերյալ առաջարկը մեր կարծիքով բավարար չափով հիմնավորված է:

Համակարծիք ենք հեղինակի այն դիրքորոշման հետ, որ ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 138.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի տրամաբանության շրջանակներում երեխայի խնամքը խնամատար ընտանիքում կազմակերպելու դեպքում պետք է լինի պայմանագրի կողմ հանդիսացող խնամատար ծնողի ամուսնու համաձայնությունը:

Չթերագնահատելով կատարված հետազոտության գիտական արժեքը, այնուամենայնիվ, ատենախոսության վերաբերյալ կարելի է որոշ դիտողություններ անել: Մասնավորապես՝

1. Մեր կողմից ընդունելի չէ ատենախոսի այն առաջարկը, ըստ որի Ընտ. օր. 135-րդ հոդվածի 2-րդ մասում «ինչպես նաև երեխայի ցանկությունը, եթե դա հնարավոր է» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ինչպես նաև 10 տարին

լրացած երեխայի կարծիքը» բառերով: Գտնում ենք, որ խնամակալ նշանակելիս երեխայի տարիք սահմանելը երեխայի շահերից չի բխում, քանի որ խնամակալ նշանակելու համար երեխայի ցանկությունը պետք հաշվի առնել նաև մինչև նրա 10 տարեկան լրանալը:

2. Համաձայն չենք հեղինակի կողմից արված այն առաջարկի հետ, որ << Ընտանեկան օրենսգրքի 135-րդ հոդվածը պետք է լրացնել 4-րդ մասով, այն է. «Խնամակալ (հոգաբարձու) նշանակելիս, այդ թվում՝ խնամատար ծնող ընտրելիս սահմանված պահանջներին բավարարող մի քանի անձանց առկայության դեպքում նախապատվության իրավունք տրվում է այն անձին, ով երեխայի ծնողներից (այլ ազգականներից) այնպիսի հեռավորության վրա է ապրում, որը նրանց հետ շփվելու խոչընդոտներ չի առաջացնի, եթե դա չի հակասում երեխայի շահերին»: Գտնում ենք, որ «երեխայի լավագույն շահերին» համապատասխան խնամակալ (հոգաբարձու) նշանակելիս, այդ թվում նաև խնամատար ծնող ընտրելիս, սահմանված պահանջների գնահատումը ըստ էության արտահայտում է հեղինակի կողմից առաջարկվող դրույթի բովանդակությունը, և << Ընտանեկան օրենսգրքի 135-րդ հոդվածը 4-րդ մասով լրացնելու անհրաժեշտություն չկա:

3. Գտնում ենք, որ բնակարան տրամադրելու առաջնահերդության ամրագրման վերաբերյալ հեղինակի առաջարկը առավելապես սոցիալական բնույթ ունի, և վիճելի է այն որպես պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթ ներկայացնելու նպատակահարմարությունը:

4. Ատենախոսության մեջ բավարար չափով ուսումնասիրված չէ արտասահմանյան երկրների փորձը, ատենախոսը հիմնականում ուսումնասիրել է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների անձնական ոչ գույքային և գույքային իրավահարաբերություններին վերաբերող << ընտանեկան օրենսդրությունը և պրակտիկան:

5. Կարծում ենք, որ ատենախոսությունը ավելի կշահեր, եթե հեղինակն անդրադառնար նաև որդեգրմանը՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի ու դաստիարակության կազմակերպման նախապատվելի եղանակ:

Այնուամենայնիվ, նշված առաջարկություններն ու դիտողությունները չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը: Ռ. Պետրոսյանի ի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների իրականացումը ՀՀ-ում» վերտառությամբ ատենախոսության վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնել, որ ատենախոսը ցուցաբերել է հիմնահարցի լավ իմացություն և ներկայացրել է գիտական պատշաճ մակարդակով ուսումնասիրված և գործնական նշանակություն ունեցող աշխատանք:

Առաջատար կազմակերպության կարծիքը քննարկվել և հավանության է արժանացել Հայ-ռուսական համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի 2021 թ. դեկտեմբերի 10-ի նիստում, արձանագրություն թիվ 8:

Հայ-ռուսական համալսարանի
քաղաքացիական իրավունքի
և քաղաքացիական
դատավարության իրավունքի
ամբիոնի վարիչ իր.գ.թ., դոցենտ Ա.Գ. ԹՈՒՆՅԱՆ

Նիստի քարտուղար՝ Տ.Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի
գիտական քարտուղար՝ Ռ.Ս. ԿԱՍԱԲԱԲՈՎԱ